«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՊԴ-315-3.05.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 1.*** «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 79-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կարող է (են) հանդես գալ» բառերը փոխարինել «հանդես է (են) գալիս» բառերով.

2) 1-ին մասի 3-րդ կետը «Կառավարության» բառից առաջ լրացնել «Կառավարության կողմից գրավոր առաջարկի առկայության դեպքում» բառերով:»:

Առաջարկվող խմբագրությամբ հոդվածի՝

1) 1-ին ենթակետով նախագիծը համապատասխանեցվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 79-րդ հոդվածի 1-ին մասի գործող խմբագրությանը.

2) համաձայն 2-րդ ենթակետի, նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստում առաջին ընթերցմամբ քննարկելիս, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախագծի վերաբերյալ առաջարկների բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը պարտադրված չի լինի հանդես գալ հարակից զեկուցմամբ: